## ԳԵՐԱՊԱՏԻՎ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԵԼԻՔ-ԹԱՆԳՅԱՆ

*Գերապատիվ Տ. Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանը Ատրպատականի հայոց թեմի առաջնորդն է։ Նա հայոց եկեղեցու հայրենասեր հոգևորականներից*



*մեկն է։ Տ. Ներսես արքեպիսկոպոսը առաջիններից մեկն էր, որ արձագանքելով Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղապահ Գեվորգ արքեպիսկոպոս Չեորեքչյանի հայրենասիրական կոչերին «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն կառուցելու համար, նախաձեռնեց «Սասունցի Դավիթ» շարասյան հանգանակությունը։*

*Նա իր հավաքած միջոցների մասին հեռագրեց Գերագույն Գլխավոր Հրամանատար, Սովետական Միության Մարշալ ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ ՍՏԱԼԻՆԻՆ և ստացավ*

ՍՏԱԼԻՆԻ շնորհակալությունը: Տ. Ներսես արքեպսի նախագահությամբ Ատրպատականի թեմում վերջերս սկսել է նաև բանակի հրամանատար Սովետական Միության հերոս Բաղրամյանի անվան շարասյան հանգանակությունը: Բացի այս հանգանակությունից Տ. Ներսես արքեպիսկոպոսի ղեկավարությամբ Ատրպատականի թեմում միջոցներ են հանգանակվել զոհված կարմիր բանակայինների երեխաների, Ստալինգրադի վերակառուցման և այլ հայրենասիրական նպատակների համար: Անցյալ զատկին Տ. Ներսես արքեպսը հատուկ կոչ էր հրատարակել Ատրպատականի հավատացյալների անունով, որի մեջ նա պատվիրում էր հավատացյալներին կրճատել իրենց զատկական ծախսերը և տնտեսված գումարը մուծել հայրենական պատերազմում զոհված կարմիր բանակայինների ընտանիքների օգնության ֆոնդը:

